ԲՈԼՈՐԱԲԵՐԴ ԱՄՐՈՑԸ

Ա. Ա. ՋԱՐՅԱՆ

Սյունյաց նշանավոր Պռոշյան իշխանների անմատույց Բոլորաբերդ[1] ամրոցը այսօր իր ավերակներով պահպանվել է Եղեգնաձորի շրջանի Վերին աշեն գյուղից 7—8 կմ հյուսիս-արևելք, Սբ. Աստվածածին[2] (Սպիտակավոր) վանքից 1—2 կմ արևելք՝ Թաքեադոնդուրան (Սրկղունք) լեռան կոնաձև գագաթին։ Ամրոցի մասին առաջին հիշատակությունը մեզ հաղորդում է Սյունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանը։ Խոսելով Աթաշխուղայի արշավանքի մասին, հեղինակը գրում է. «Հասնելով Վայոց ձոր գավառի մեջտեղը, Եղիգիս և Մոզան դետերի միջև գտնվող քարաժայռերով պատած բլրի մոտ, տեղի ամրության պատճառով, մեծ արյունահեղություն սրեցին»[3]։ Այստեղ ուղղակի չի նշվում բերդի անունը, սակայն Օրբելյանը նշում է հարակից վայրերի մի քանի բնակավայրերի անուններ, որոնք գտնվում են Բոլորաբերդի շրջանում։ «Իսկ մյուսներին հետապնդեցին և նրանց մի մասին հասնելով մի բերդաժայռի ստորոտում, նեղ ձորակի մեջ՝ այնտեղ կոտորեցին։ ...Հենց այն տեղն էլ կոչվեց Անգեղաձոր։ Եվ այստեղից արշավելով վրա հասան երեք հարյուր մարդու Ոստինք և Արտաբույնք կոչված գետախառնման տեղում, որտեղ նրանց էլ խողխողեցին. ...Եվ պարսիկներն այնտեղից մի փոքր անցան դեպի ձորաբերանը, որը ձախ կողմից դեպի վեր նայում է Ցախացքար կոչված սուրբ վանքին...»[4]։ Հիշատակված Անգեղաձորը համապատասխանում է Շատին գյուղին (Եղեգիսից ոչ հեռու)[5], Ոստինքը՝ Ժոստունն է[6], Արտաբույնքը՝ (Արտաբոյն) այժմ, Էրտափին (Էրդափն) գյուղատեղն է, իսկ Ցախաց քար վանքը մինչև օրս գոյություն ունի և գտնվում է Սմբատաբերդ ամրոցի դիմաց։ Գետերի, ձորերի, բնակատեղերի և վանքերի անունները Բոլորաբերդի շրջակայքում են և պիտի ենթադրել, որ պատմիչի նկարագրած դեպքերը կապված են Բոլորաբերդ ամրոցի հետ։ Ղևոնդ Ալիշանը, մեկնաբանելով Ստ. Օրբելյանի այս նույն վկայությունը, հաստատում է, որ «...յարեւմտից Սրկղօնից լերանց, կայ ամայի հին գիւղն Պաշքէնտ[7], ունելով ի հարաւոյ նոյնպէս ամայի և աւերակ բերդ համանուն՝ ի միջոցի կրկին ոստոց լերանց»[8]։ Ալիշանը ամրոցն անվանում է

---

1 Ամրոցը հիշատակվում է Բոլորաբերդ, Բոլորարեղ, Պռոշաբերդ, Պռոշի բերդ անուններով. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (տե՛ս հ. 1, Երևան, 1986, էջ 107)։

2 Եկեղեցին հիշատակվում է «Բոլորաբերդոյ անապ(ատ)», «Բոլորաձոր անապատ» անուններով (տե՛ս ԺԵ դարերի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմ. Լ. Ս. Խաչիկյան, մաս Գ (1481—1500 թթ.), Երևան, 1967, էջ 26, 57)։

3 Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 107։

4 Նույն տեղում։

5 Նույն տեղում, էջ 430, ծան. 192։

6 Նույն տեղում, ծան. 193։

7 Պաշքէնտ կամ Բաշքյանդ գյուղը համապատասխանում է պատմական Սրկղունք կամ Սրկղոնք ավանին, որի դիմաց նույնանուն լեռն է, որը հետագայում վերանվանվել է Թեքեդոլդուրան կամ Թաքեագեոնդուրան (տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 604, Գարեգին կաթողիկոս Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ, Լիբանան, 1969, էջ 19—20)։

8 Ղևոնդ Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 120—130։

«Պաշքէնտ բերդ» և այն նույնացնում Բոլորաբերդի հետ. «...բլուրն այն մեծամեծ վիմօք պատեալ և ամրացեալ՝ այժմեան աւերակն է Պաշքէնտ բերդի և նոյն դարձեալ Բոլորաբերդ կոչեցեալ երբեմն...»[9]։

Խաղբակյան և Պռոշյան իշխանական տոհմերի հետ են կապվում 1201 թ. Սյունիքի Վայոց ձոր գավառում ծավալված շինարարական գործունեությունը և հոգևոր կենտրոնների հիմնումն ու զարգացումը, երբ Զաքարյանները Վայոց ձորի մի մասը տալիս են Պռոշյաններին[10]։ Արատեսի վանքի (Վայոց ձոր) մի արձանագրությունից տեղեկանում ենք, որ «Վասակն էր նվաճել Եղեգյաց ձորի ամրոցները, իսկ ըստ Օրբելյանի նաև Հրաշկաբերդը»[11]։

Վայոց ձորը, լինելով Սյունիքի հույժ կարևոր առևտրական և ռազմական հանգույցը, իր անդնդախոր ձորերի, գետահովիտների ու կիրճերի, բնական արգելքների ամրողջական համակարգերի շնորհիվ լավ ամրացված ու կառուցապատված էր տարբեր նշանակության պաշտպանական կառույցներով, ամրոցներով, դղյակներով։ Բավական է նշել, որ Վայոց ձորով էր անցնում հնում մեծ նշանակություն ունեցող առևտրառազմական Դվին-Պարտավ ճանապարհի Գեղարքունիք-Սիսաջան ճանապարհամասի Սելիմի լեռնանցք-Արբա հատվածը[12], որը պաշտպանված էր բերդամրոցների ամբողջական համակարգով, Բոլորաբերդ ամրոցը, երկրի ռազմավարական ընդարձակ ծրագրում ընդգրկված լինելով հանդերձ, առևտրառազմական ճանապարհի պաշտպանական համակարգի մասը չի կազմել։ Այն կառուցված էր գլխավոր մայրուղուց դեպի արևելք և, տեղադրված լինելով ոչ թե լեռնապարանոցին, այլ առանձին մի բլուրի ժայռացից գագաթին, հանդիսացել է իշխանական «կաստել» դղյակ-ամրոց տիպի[13] պաշտպանական կառույց։ Ամրոցը Բոլորաբերդ-Սպիտակավոր երկկենտրոն պաշտպանական համակարգի մաս է կազմել, ինչպես, օրինակ, դրանից ոչ հեռու, դեպի հյուսիս-արևմուտք գտնվող Սմբատաբերդ-Ցախաց քար նույնատիպ պաշտպանական համակարգը[14]։

Պռոշյանները ամբողջական իշխանական տարածք չեն ունեցել. այն ընդգրկել է մի քանի կալվածքներ, որոնցից ամենաընդարձակը Ճահուկի արևելյան մասն էր, ապա Վայոց ձորի Ազատ գետի հովիտը, ինչպես նաև Գեղարգա վանքը, Կեչառիսի վանքը։ Վայոց ձորում Պռոշյանների գլխավոր իշխանանիստը Սրկղունք[15] ավանն էր, ռազմավարչական կենտրոնը՝ Բոլորաբերդը, իսկ հոգևոր կենտրոնը՝ Թանատ-Գլաձոր վանքը։ Պռոշյանների տոհմին են վերագրվում նաև Աղբերաց կամ Գայլեձոր ու Թանահատ վանքերը[16]։ Ըստ Գ. Հովսեփյանի, Բաշքենդում էր (այժմ՝ Վերնաշեն) գտնվում Պռոշյանների իշխանական պալատը. «Մինչև վերջին ժամանակները մնացել էին դեռևս պալատի

---

9 Նույն տեղում, էջ 130։

10 Հ. Եզիազարյան, Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Երևան, 1960, էջ 44։

11 Գարեգին կաթողիկոս Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 18։

12 Ա. Ա. Զարյան, Սյունիքի ամրոցաշինության որոշ սկզբունքների մասին (Պատմա-բանասիրական հանդես, 1988, № 1, էջ 224—285)։

13 Կաստելը բյուզանդական ամրոցի տիպ է, որը ներկայացնում է հատակագծում քառակուսի կամ ուղղանկյուն, չորս պարսպապատերի մեջ ներփակված և անկյուններում բուրգերով ամրացված պաշտպանական կառույց։ Այս տիպը փաստորեն անկյուններում բուրգերով ամրացված բազմանիստ պաշտպանական կառույցի նախատիպն է։

14 Ա. Ա. Զարյան, Որոտնաբերդ-Որոտնավանք պաշտպանական համակարգը (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտություններին, 1986, № 10, էջ 61—69)։

15 Սրկղունք կամ Սարկղովք է կոչվել մինչև XVIII դ., որից հետո գյուղավանը վերանվանվել է Վերնաշեն (Թ. Հակոբյան, Սովետական Հայաստանի տեսարժան վայրերը, Երևան, 1959, էջ 165)։ Պռոշյանների երկրորդ գլխավոր նստավայրը եղել է Մարտիրոս ավանը (Գարեգին կաթողիկոս Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 23)։

16 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ., Երևան, 1952, էջ 115, Գարեգին կաթողիկոս Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 36—45։

կամ պարսպի դռան կամարը՝ (բարավորը—Ա. Զ.) Պռոշյանց զինանշան համարված, բարձրաքանդակ առյուծներով և պարսպի ու եկեղեցու մնացորդներով»[17]։ Պռոշ իշխանական տոհմի առյուծապատկեր զինանշանը շատ լավ պահպանվել է Գեղարդավանքում և Ախտայի խաչարձանում։ Արխիվային ուսումնասիրությունների ժամանակ (Հայաստանի պատմության պետական թանգարան, ֆ. № 2688), ինձ հաջողվեց գտնել Տարագրոսի՝ 1934 թ. արած Բոլորաբերդի առաջին և միակ հատակագծի և որոշ մանրամասների չափագրությունները։ Ամրոցի անվան հիշատակությունը պահպանվել է 1475 թ. Աբրահամ Ծաղկողի Ավետարանում[18]։

Ինչպես նշված է ձեռագրի հիշատակարանում, այն պատկերազարդվել է Թանատ-Գլաձորի վանքից ոչ հեռու գտնվող Բոլոր-բերդում[19]։ Բոլորաբերդի կառուցման մասին ստույգ տեղեկություններ չկան։ Թ. Հակոբյանը, ելնելով այն բանից, որ բերդը կոչվել է նաև Պռոշաբերդ, նրա կառուցումը (հավանաբար վերանորոգումը) վերագրում է XIII դ.[20]։

Արդ, քննենք, թե ինչպես են դիրքորոշված Պռոշյանների ամրոցները Վայոց ձոր և Ճահուկի Շահապոնք գավառներում։ Ցավոք, ամրոցների մասին տեղեկությունները շատ սակավ են, պատմիչները միշտ չէ, որ նշում են դրանց տեղադրությունը։ Ղ. Ալիշանի «Սիսական», Գ. Հովսեփյանի «Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց Պատմության մեջ» և Ա. Այվազյանի «Նախիջևանի ՍՍՀ հայկական հուշարձանները» (Երևան, 1966) աշխատությունների ու քարտեզների ուսումնասիրությունը թույլ տվեց մոտավոր ճշտությամբ սահմանել Պռոշյան իշխանների տիրույթները Սյունյաց աշխարհում։ Պռոշյաններին պատկանող Շահապոնք գավառի բոլոր գյուղերի ու որոշ ամրոցների Ղ. Ալիշանի նկարագրությունը հնարավոր դարձրեց վերականգնել գավառամասի սահմանները Ճահուկում, իսկ Գ. Հովսեփյանի աշխատությունից (Վայոց ձոր գավառում Պռոշյաններին պատկանող գյուղերի տեղադրությունից) եզրափակեցինք Վայոց ձոր գավառի սահմանները։

Վայոց ձոր գավառում գտնվել են (հյուսիս-հարավ) Բոլորաբերդ, Նորաշեն (Եղեգնաձոր)[21], Արտաբկաձոր, Շահապոնքում՝ Ջռնել (Ջարինի), Անուշավան, Նշուտ, Թերքեշ, Շահապոնք, Աչքյամբ, Վայխիր, Խոռնի ամրոցները։ Ակամա չենք հաստատելու, որ այս ամրոցները նորոգվել և օգտագործվել են Պռոշյանների տիրապետության շրջանում. սակայն կարծում ենք, որ Զաքարյաններից ժառանգություն ստացած Սյունիքի այս տարածքները ճշտելու ժամանակ անպայման հաշվի են առնվել ամրոցների դիրքորոշումները տիրույթի սահմանազատ շրջաններում։ Պռոշյանների տիրույթի ողջ արևմտյան կողմը, որը սահմանակից էր Այրարատ ու Նախճավան գավառներին, ամրացված էր բերդերի ամբողջական համակարգով, որոնք բաժանված էին իրա-

17 Գ ա ր ե գ ի ն կ ա թ ո ղ ի կ ո ս Հ ո վ ս ե փ յ ա ն, նշվ. աշխ., էջ 19։

18 Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 2634։

19 Ա. Ն. Ա վ ե տ ի ս յ ա ն, Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը, Երևան, 1971, էջ 139։ Գրիչը, հավանաբար, նկատի է ունեցել Բոլոր-Բերդի անապատը, քանի որ քիչ հավանական է բերդում ձեռագիր ծաղկելը, երբ ոչ հեռու Սբ. Աստվածածին վանքն էր, ուր արդեն զբաղվում էին ձեռագրությամբ։

20 Թ. Հ ա կ ո բ յ ա ն, Հայ ժողովրդի պատմության հիշարժան վայրերը, Երևան, 1978, էջ 110։

21 Ըստ Հ. Միքայել Հովհաննեսյանի «Հայաստանի բերդերը» (Վենետիկ, 1970, էջ 363—365 և 366) աշխատության, Եղեգնաձորի բերդը նույնն է, ինչ Եղեգիսի, Ալադյազի, Ցախաց քարի կամ Սմբատաբերդի ամրոցը, սակայն մեր նշած Եղեգնաձոր ամրոցը գտնվում է Եղեգնաձոր շրջկենտրոնի հարավ-արևմտյան մատույցներում, մի փոքր բարձունքի վրա և կառուցված է կիկլոպյան շարվածքով։ Այժմ կառույցից տեղ-տեղ պահպանվել են 1,5—2 մ բարձրությամբ հաստավուն պատերը, որոնք շրջապատում են բլրի գագաթը և քողարկված են տնամերձ հողամասի բուսական ծածկույթով։ Ամրոցի միջնադարյան հիշատակությունների մասին տեղեկություններ չունենք։

ից ձորերով ու լեռնաշղթաներով։ Այս հանգամանքը, անշուշտ, նպաստել է նոր իշխանական տիրույթը ամուր պահելու համար, մանավանդ մոնղոլական գերիշխանության շրջանում։ Ըստ Ա. Այվազյանի[22], Ճահուկի Շահապոնք, Խոռնի, Անուշավան, Զոնել ամրոցները վերանորոգվել են միջնադարում, որը ևս հաստատում է մեր ենթադրությունը։

Բոլորաբերդ ամրոցը տեղադրված է Սրկղունք ձորահովտի Թաքեադոնդուրան բարձրադիր լեռան գագաթին (2912 մ)[23]։ Բլուրը գերիշխող դիրք ունի շրջապատի նկատմամբ, որի բարձունքից պարզ եղանակին լավ երևում է Եղեգիս գետի հյուսիսային հոսանքի ամբողջ գետահովիտը և ամրոցից մոտ 7 կմ հյուսիս-արևմուտք գտնվող Սմբատաբերդ դղյակ-ամրոցը։ Բոլորաբերդի դիրքն ընտրված է այնպես, որ մոտ 10—12 կմ շառավիղ ունեցող շրջանագծի մեջ ներառնվում են Նորաշեն, Եղեգնաձոր, Ագարակաձոր, Սմբատաբերդ ամրոցները, որոնք գտնվել են հսկողության տեսադաշտում և ամենայն հավանականությամբ ունեցել փոխադարձ հաղորդակցության կապեր։ Լեռան շրջանաձև ստորոտը ողորկ է, բուսական ծածկույթից զուրկ, թեքադիր բարձրանում է վեր, ուր հատվում է զանգվածային, առանձին խմբավորված ժայռաբեկորներին։ Բոլոր կողմերից անմատույց ժայռածերպերն անմատչելի են դարձնում վերելքը դեպի գագաթ։ Մոտեցման միակ՝ առավել հարմար կողմը հյուսիս-արևելքից է, որտեղ ժայռազանգվածները խմբավորված են լեռան բուն գագաթին և դրանով իսկ հնարավոր են դարձնում համեմատաբար անարգել մոտեցումը մինչև գագաթի շրջանը։ Այս նկատառումներից ելնելով, բոլորաձև ամրոցի պարսպապատերի փակ օղակից դուրս կառուցվել է պարսպի առանձին կանգնած մի գոտի, որի մնացորդները մինչ այսօր պահպանվել են մոտ 13 մ երկարությամբ և 2,5—3 մ բարձրությամբ։ Ներկայումս Բոլորաբերդի արևմտյան կողմում, հարթավայրի վրա, փոքրիկ ձորակի ափին նկատելի են հին բնակատեղի հետքերը՝ փոսերի ձևով։ Հավանական է, որ նրանք Բոլորաբերդ գյուղի ավերակներն են[24]։

Բլրի արևելյան կողմում պահպանվել են նաև փոքր մատուռի ավերակները։ Ամրոցի բոլորապատերից ներս ընկած տարածքը զբաղեցնում է մոտավորապես 1,5 հա տարածություն և մինչև պարսպապատերի պահպանված վերին մակարդակը լցված է բնականից տափանված հողով ու քարակույտերով։ Ամրոցը հատակագծում յոթանիստ բազմանկյուն է, որի հարավ-արևելյան կողմը 90° է կազմում և միակն է, որն ամրացված չէ բուրդով։ Պահպանված ամրոցապատերի ընդհանուր երկարությունը մոտ 120 մ է։

Տարագրոսի չափագրությունը ընդհանուր առմամբ համարժեք է մեր չափագրածին, սակայն իրականացված է ավելի սխեմատիկ սկզբունքով։ Տարագրոսի չափագրության մեջ հետաքրքրական են մուտքի հատվածը, պարսպապատերից ներս՝ արևմտյան և հարավային կողմերում ցույց տրված աշխարհիկ կառույցների սենյակների դասավորությունը, որոնք այժմ համարյա չեն պահպանվել, ջրամբարի մոտ տեղադրված ձվածիր կառույցը, մուտքից քիչ հյուսիս-արևմուտք՝ այժմ էլ պահպանված երդիկավոր ուղղանկյուն սենյակի կտրվածքը։ Տարագրոսի չափագրությունում պարսպապատի հարավ-արևելյան անկյան մոտ, հարավային պատի մեջ, առկա է մի բացվածք, որը, հավանաբար, մուտք է եղել։ Տեղում մեր կատարած ուսումնասիրությունները այս փաստը չեն հաստատում։ Տրամաբանական չէ միևնույն գծային ուղղության վրա, իրարից ոչ հեռու, ամրոցի

22 Ա. Այվազյան, նշվ. աշխ., էջ 140, 143, 151, 154։

23 Լեռան բարձրությունը՝ ըստ Խ. Ավդալբեգյանի «Հայաստանի Հանրապետության քարտեզի» (Երևան, 1932)։ Քարտեզում գագաթը կոչվում է Շատիվանք։

24 Հ. Եղիազարյան, նշվ. աշխ., էջ 44։ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում» Բոլորաբերդ գյուղը տեղադրված է Գնիշիկ գյուղից 4—5 կմ արևելք, Վարդաբլուր լեռան լանջին, որի գագաթին նույնպես ամրոցի ավերակներ են պահպանվել Վարդաբլուր անունով (էջ 722)։ Այն կապ չունի Թաքեադոնդուրան լեռան ստորոտի արևմտյան մասում պահպանված բնակավայրի հետ (Հ. Եղիազարյան, նշվ. աշխ., էջ 44)։

երկու մուտքի գոյությունը։ Դա հակասում է նաև ռազմավարական սկզբունքներին։ Չնայած ամրոցի պարսպապատերի այս հատվածը շատ վատ է պահպանվել (այստեղ պատի արտաքին երեսապատի քարերի մեծ մասը թափված են), սակայն ստորին մակարդակին բացվածքի հետքեր չենք փաստագրել։ Տարագրոսի չափագրությունում կա ևս մեկ տարբերություն։ Ամրոցի պարսպապատի արևելյան կողմի միջին մասում տեղադրված սնամեջ աշտարակը, բացի կիսաշրջան լինելուց (իրականում այն քիչ դուրս արտահայտված ձվածիր է, ավելի ուշ շրջանի կառույց), այն հպված է ուղղագիծ պարսպի մոտավորապես միջին հատվածում։ Այս փաստը ևս հավաստի չենք համարում, քանի որ աշտարակը կառուցված է պատի հետ միաժամանակ և գոյություն չունեն պատի և աշտարակի արտաքին մակերևույթների շարվածքի քարերի կցակարեր։ Դրանից բացի, ամրոցի շինարարները չէին կառուցի ամրոցի բազմանիստի 40 մ երկարությամբ մի հատված, առանց որմնահեցբուրգի կիրառման, առավել ևս այն դեպքում, երբ իրականում, այս աշտարակի տեղից սկսած, պատը փոքր անկյունով բեկվում է դեպի արևմուտք, որը չի արտահայտված Տարագրոսի գծագրում։ Ընդհանրապես ամրոցաշինության ընդունված սկզբունքներից մեկն այն է, որ, շինարարական և կոնստրուկտիվ առանձնահատկություններից ելնելով, պարսպապատերի բեկման անկյուններում, որպես կանոն, կառուցվել են աշտարակներ, բուրդեր, որոնք եղել են սնամեջ, եթե օգտագործվել են զինապայքարի համար և հոծ՝ առավելապես որմնահեցի, այսինքն, կոնստրուկտիվ նշանակությամբ։ Այս բոլոր դիտողությունները, անշուշտ, չեն արժեզրկում դարասկզբին Տարագրոսի կատարած շատ կարևոր փաստագրական չափագրությունը, որի շնորհիվ այսօր հնարավորություն ունենք գաղափար կազմելու կես դար առաջ ամրոցի ընդհանուր վիճակի և նկարագրի մասին և համեմատել այսօրվա վիճակի հետ։

Բոլորաբերդի բոլոր կառույցները իրականացված են տեղական մոխրակապտավուն բազալտե որձաքարերից։ Պատերը շարված են կիսամշակ, միջին չափերի, առավելապես հորիզոնական ուղղությամբ տեղադրված ուղղանկյուն քարերից, կրաշաղախի միջնաշերտով։ Պահպանված արտաքին պատերի միջին բարձրությունը 6—7 մ է։ Ինչպես բոլոր հայկական միջնադարյան ամրոցներում, Բոլորաբերդում նույնպես պատը եռաշերտ է (պատերի այս կառուցվածքը հստակ ընկալվում է Տարագրոսի չափագրությունում)։ Ամրոցապատերի և աշտարակների արտաքին և ներքին մակերևույթների քարերի ներս ուղղված պոչերը բավական երկար են և սուրանկյուն։ Այս նույն սկզբունքով են շարված նաև Բոլորաբերդից քիչ հեռու գտնվող Սմբատարերդ ամրոցի պարսպապատերը։ Բոլորաբերդում պատերի արտաքին հատվածների, առավելապես վերին հատվածների շինարարական տեխնիկան շատ յուրատեսակ է և քիչ տարածված Սյունիքի այս ժամանակաշրջանի կառույցներում։ Ամրոցի հարավ-արևելյան, հյուսիս-արևմտյան և արևմտյան պահպանված պարսպապատերի արտաքին մակերևույթների շարվածքի ձևը խիստ տարբերվում է մնացյալ շարվածքներից։ Այստեղ կիրառվել է «եղևնաձև» կամ «ձկան ողնաշար» կոչված շարվածքը, որը իրականացվում է հորիզոնական առանցքից մոտավորապես 45 աստիճան թեքությամբ տեղադրված և իրար նկատմամբ հակառակ թեքություն ունեցող քարերով[25]։ Այս մոտիվը կիրառվում է պատի հատվածի ամբողջ երկարությամբ և կրկնվում երկու կամ երեք մակարդակներով։ «Եղևնաձև» շարվածքի սխեմատիկ պատկերը լավ արտահայտված է նաև Տարագրոսի հատակագծի աջ կողմում գծված մուտքի ճակատի գծագրում։ Ամրոցապատերի արտաքին վերին հատվածներում պահպանվել են նաև փոխուղղահայաց դասավորությամբ գոտիներ, ընդ որում հորիզոնական քարերի բլոկները երեք հաջորդական շար-

25 Նման շարվածքը հանդիպում է նաև XIX—XX դդ. Դաղստանի և Անդրկովկասի կառույցներում (տե՛ս А. Гольдштейн, Башни в горах, М., 1977, с. 26)։

քով են՝ մեկը մյուսի վրա, իսկ դրանք փակող ուղղահայաց դասավորությամբ գոտին՝ մեկը։ Նույն ամրոցապատերի վրա հանդիպում են նաև զուգ հորիզոնական և ուղղահայաց, մեկական հորիզոնական ու ուղղահայաց դասավորությամբ շարվածքի մոտիվները։ Այս երկու սկզբունքներով պատերի վերին հատվածների շարվածքներ են պահպանվել Որոնաբերդում. ամրոցի մուտքից ձախ, երկու ժայռաքանդվածները փակող պատին[26], Ագուլիսի ամրոցում[27], Թանակերտի Սբ. Աստվածածին եկեղեցու արևմտյան պատին (ԼԼՀ)[28]։ Սբրբատաշ քարերով իրականացված միակ մասը ամրոցի հարավ-արևմտյան մուտքն է։. Ամրոցի մուտքը դիրքորոշված է դեպի հարավ և գտնվում է բազմանիստի ամենաերկար, ուղղագիծ բերդապարսպի արևմտյան անկյան մոտ։ Ռազմավարական նկատառումներից ելնելով, այստեղ օգտագործված է մուտքի առանցքի նկատմամբ 90° դեպի արևելք դիրքորոշված, սլաքաձև թաղով սրահ-անցուղին, որը նպատակ ուներ դժվարացնել և ծուղակի մեջ գցել գլխավոր մուտքից ներս խուժած թշնամուն։ Այս սրահը իրագործված է կոպտատաշ բազալտե քարերով և, հնարավոր է, որ կառուցված լինի ամրոցի հերթական վերանորոգման ժամանակ։ Տեղում ստուգելը այսօր անհնար է, քանի որ ամբողջ մուտքային հանգույցը քողարկված է փլատակներով։ Սրբատաշ կամարակապ մուտքի լայնությունը 2 մ է, իսկ ամբողջական վերականգնված բարձրությունը ըստ Տարագրոսի՝ 6 մ։ Առանց պեղումների դժվար է ճշգրիտ պատկերացում կազմել մուտքային թաղերի ներսի տարածությունների վիճակի ու ճարտարապետաշինարարական հորինվածքի մասին։ Տարագրոսի չափագրությունում մեր վավերագրած սրահ-անցուղին բացակայում է, սակայն այստեղ առկա են մուտքի երկու կողմերից, պարսպապատից դուրս արտահայտված պատի ուղղանկյուն ծավալներ, որոնք, ըստ գծագրելու ձևի, հետագայի կցոններ են։ Ռազմավարական մեկ այլ սկզբունք, կապված տեղանքի գծագրության հետ, կիրառվել է մուտքի տեղընտրման ժամանակ։ Արդեն նշեցինք, որ դեպի բլրի գագաթ բարձրանալու միակ հարմար կողմը հյուսիս-արևմուտքից է, իսկ բերդամուտքի անմիջապես առջևի մասը երկու կողմերից քողարկված է ժայռաքանդվածներով։ Այս ուղղությամբ դեպի ներքև գահավեժ քարաժայռեր են, որտեղ մագլցելը անհնար է։ Թշնամին պետք է բարձրանար միայն բլրի հյուսիսակողմից և մուտքին մոտենար ստորոտներով, շրջանցելով ամրոցապատերի ողջ երկարությունը, շարժվելով դեպի հարավ-արևելք կամ հարավ-արևմուտք։ Այս հանգամանքը շատ ձեռնտու էր պաշտպանվողների համար, քանի որ բարձրադիր մարտահարթակը և լավ տեսադաշտը խիստ նպաստավոր էին բերդապատերից ու աշտարակներից հարձակումը կասեցնելու համար։

Ամրոցի հատակագծի բազմանկյուն կողմերի քանակը և երկարությունը, անկյունների բուրգերի ձևն ու չափերը, մուտքի կողմնորոշման և, անշուշտ, պարսպապատերի տեղընտրությունն ու բարձրությունը որոշակի տեղանքում պայմանավորված է բլրի գագաթի ժայռածածկույթի առկայությամբ և առանձին քարաքանդվածների ու ապառաժաբեկորների բնական դիրքով։ Այդտեղ, ինչպես Սյունիքի բոլոր ամրոցներում, շատ հմտորեն օգտագործվել է տեղանքի առանձնահատուկ աշխարհագրությունը, բնական խոչընդոտների անկորուստ օգտագործումը՝ նորակերտ արգելք պատնեշների հետ սերտորեն կապակցված։ Գագաթը շրջափակող ձեռակերտ պարսպապատերը կարծես լրացնում են ժայռապատնեշների տարբեր մակարդակների վրա ընթացող և դեպի գագաթը աստիճանաձև բարձրացող բնական պատերի ամբողջական համակարգը։ Բոլորաբերդի ներսի տարածությունը պարագծով քիչ հարթեցված

---

26 Ա. Ա. Զ ա ր յ ա ն, Որոնաբերդ..., էջ 67, գծ. 3(4)։

27 Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման ու օգտագործման գլխավոր վարչության ֆոտոարխիվ, նեգատիվ № 2936։

28 Ա. Ա յ վ ա զ յ ա ն, նշվ. աշխ., նկ. 8։

և հարմարեցված է աշխարհիկ կառույցների շինարարության համար, իսկ միջին հատվածը թողնված է բնական օրինաչափ ձևով, որտեղ հսկայածավալ բազալտե ժայռաքարերը անկանոն լցված են իրար վրա։ Ամրոցի բուրգերը հինգն են, որոնցից պահպանվել են չորսը՝ երկուսը քիչ դուրս արտահայտված, սնամեջ, ձվածիր, իսկ երկուսը՝ կիսաշրջանաձև, հոծ։ Առաջին երկուսը հանդիսացել են հսկիչ դիտաշտարակներ, որտեղից լավ տեսադաշտ է բացվում դեպի ամբողջ ձորահովիտը։ Այս բուրգերի սնամեջ հատվածները կըրկնում են արտաքին ձվածիր հորինվածքը և քողարկված են փլատակներով։ Բուրգերի պատերի շարվածքը իրականացված է բերդապատերի շարվածքի նույնությամբ, իսկ հաստությունը տատանվում է 180—200 սմ-ի միջև։

Բերդի մուտքից քիչ արևելք գտնվում է թաղակապ, հատակագծում ուղղանկյուն, երդիկավոր կառույցի համեմատաբար լավ պահպանված շինությունը։ Հողի մակարդակը ժամանակի ընթացքում այնքան է բարձրացել, որ այժմ թաղակապ կառույցի ծածկը արտաքինից հավասարվել է տեղանքին։ Շինություն ներս մտնելը անհնար է, սակայն Տարաբրոսի չափագրությունում պահպանվել են այս կառույցի կտրվածքը և հատակագիծը, որի համաձայն այն հյուսիսային և հարավային կողմերից ունեցել է լուսամուտներ, իսկ արևմուտքից՝ մուտք։ Դժվար է առանց պեղելու ճշտել այս շինության նշանակությունը։ Տարաբրոսը այն պարզապես անվանում է «սենյակ»։ Այս կառույցից մոտ 15 մ հյուսիս, բլրի ժայռագագաթի հակադիր կողմում գտնվում է հատակագծում կլոր, 2 մ տրամաչափով և կտրվածքում դեպի հատակը լայնացող, մոտավորապես 2,5 մ բարձրությամբ ջրամբարը։ Այն կառուցված է բազալտե կիսամշակ քարերի անկանոն շարվածքով, որի ներսի մակերեսին մնացել է սվաղի ծածկույթի մի փոքր հատված։ Ջրամբարի հատակը նույնպես լցված է քարերով և հողով, բայց նրա չափերն ու հորինվածքը պարզորոշ ընկալվում են։ Ամրոցապատերի ներսում պահպանված հատվածներից են նաև արևելյան երկարությամբ ընթացող սենյակների հետքերը, որոնց ճշգրիտ տեղադրությունը, չափերը և նշանակությունը հնարավոր է պարզել միայն հնագիտական պեղումների արդյունքներով և ի հայտ եկած ճարտարապետական արժեքների ուսումնասիրությամբ։ Համոզված ենք, որ այս աշխատանքների ժամանակ կհայտնաբերվեն նաև ստորերկրյա անցուղին և մինչև օրս աննշան երևացող ջրմուղի ամբողջական հատվածները։

Բոլորաբերդ ամրոցը տեղընարության սկզբունքով և դիրքորոշմամբ նման է Սյունիքի Ապանա (Վայոց ձոր գավառ), Երնջակ (Երնջակ գավառ), Շահապոնք (Շահապոնք գավառ), Աղջկաբերդ և Նահատակ (Նախճավան գավառ) ամրոցներին և պատկանում է ներփակ բերդապարիսպներով դղյակ-ամրոց պաշտպանական կառույցի տիպին։ Այս տեսակետից այն կարելի է համեմատել Արցախի Ղալաշա (XIII դ.) և Արագածոտնի Կափլի (Գուսանագյուղ, XII—XIII դդ.) ամրոցների հետ։ Հատակագծային հորինվածքով Բոլորաբերդը զարմանալիորեն նմանվում է Կիլիկիայի Կորիկոս[29] (որ ծովային ամրոցների տիպին է պատկանում) և Ծնի Քյոյի ամրոցներին։ Կիլիկյան այս երկու ամրոցները ևս ունեն դղյակներին հատուկ ներփակ բերդապարիսպներ, որոնց բազմանկյունների 7 կողմերը անկյուններում ամրացված են տարբեր հորինվածք և նպատակ ունեցող աշտարակներով և որմնահեց-բուրգերով։ Կորիկոս ամրոցի հատակագծի բազմանիստի հարավարևմտյան անկյունը նույնպես ուղիղ է, սակայն, քանի որ այստեղ բեկյալի կողմերը ավելի երկար են, անկյունում տեղադրվել է ուղղանկյուն բուրգը։ Հատակագծային նմանությունները խոսում են այն մասին, որ ամրոցի այս տիպը ստեղծվելով Բյուզանդիայում և տարածում ու զարգացում գտնելով Հա-

---

29 Կորիկոսը բաղկացած է երկու ամրոցներից. ցամաքային և ծովային (Robert W. Edwards, The fortifications of Armenian Cilicia, Washington, 1987, p. 161—166):

յաստանի տարբեր շրջաններում, կիրառվել է թագավորական ու իշխանական ռազմավարական զանազան ծրագրեր իրականացնելու ժամանակ։

Բոլորաբերդ-Պռոշաբերդ ամրոցը Պռոշյան իշխանների կառուցած ամենանշանավոր պաշտպանական ճարտարապետական կառույցն է, որը Սյունյաց աշխարհի բերդերից առանձնանում է տեղընտրության և բնական խոչընդոտների շատ հմուտ օգտագործմամբ, հատակագծային հորինվածքով, պատերի շարվածքի զարդամոտիվ հիշեցնող առանձնահատկությամբ, մուտքային հանգույցի յուրատեսակ լուծմամբ։ Ամրոցը և հարակից տարածքը կարիք ունեն պարբերական հնագիտական պեղումների և մասնագիտական կոնսերվացման ու բարեկարգման։ Այս դեպքում միայն հնարավոր կլինի լիարժեք ներկայացնել Վայոց ձորի նշանավոր պաշտպանական կառույցներից մեկը՝ Բոլորաբերդ ամրոցը։

КРЕПОСТЬ БОЛОРАБЕРД

А. А. ЗАРЯН

Резюме

Развалины крепости Болораберд находятся на расстоянии 7—8 км северо-восточнее села Вернашен Ехегнадзорского района (Вайоц Дзор). Крепость была построена сюникским князем Прошем в XIII в. в качестве его княжеского замка и являлась военизированным опорным пунктом для княжеского рода Прошянов. Она расположена на вершине холма конусообразной горы Такеадондуран. Болораберд в плане— семигранный многоугольник с пятью сохранившимися башнями в углах изгиба прямолинейных крепостных стен. С юго-западной стороны сохранился сводчатый с изгибом на 90° галереебразный вход. На территории цитадели сохранились также развалины некоторых построек, в том числе водохранилища.